Հաստատված է Խ.Աբովյանի անվան

հայկական պետական մանկավարժական համալսարանի

արհեստակցական կազմակերպության Արհկոմի 26.01.2023թ.

թիվ 9 նիստի որոշմամբ:

ԱՐՀԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Է.Ա.ԳՈՒԼՅԱՆ

ԿԱՐԳ

Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ (ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ) ԿԱՄ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ (ՀԵՌԱՑՎԵԼՈՒ)

1. Սույն կանոնակարգով (այսուհետ կարգ) սահմանվում են Խ.Աբովյանի անվան

հայկական պետական մանկավարժական համալսարանի արհեստակցական կազմակերպությանն (այսուհետ կազմակերպություն) անդամակցելու (մասնակցելու) կամ անդամությունից հրաժարվելու (հեռացվելու) հարցերը:

2. Կազմակերպությանն անդամակցել կարող են ՀՊՄՀ գործատուի հետ աշխատանքային

օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող այն աշխատողները, ովքեր ընդունում են կազմակերպության կանոնադրությունը, մասնակցում են կազմակերպության գործունեությանը, ծրագրերի իրականացմանը և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված չափով մուծում են անդամավճար:

3. Կազմակերպությանն անդամակցելը (մասնակցելը) կատարվում է ՀՊՄՀ աշխատողի

գրավոր դիմումի համաձայն՝ Արհկոմիտեի կողմից հաստատված դիմումի ձևով: Դիմումը գրելու և ստորագրելու պահից սկսած ՀՊՄՀ աշխատողը համարվում է կազմակերպության անդամ (մասնակից): Անդամավճարը գանձվում է դիմումը ներկայացնելու հաջորդ ամսվա մեկից սկսած:

4. Կազմակերպության անդամությունից հրաժարվելը կատարվում է կազմակերպության

անդամի գրավոր դիմումի համաձայն՝ Արհկոմիտեի կողմից հաստատված դիմումի ձևով: Դիմումը ներկայացվում է ՀՊՄՀ արհեստակցական կազմակերպություն անձամբ դիմումատուի կողմից կամ փոստային առաքմամբ: Դիմումը արհեստակցական կազմակերպություն ներկայացնելու հաջորդ ամսվա մեկից սկսած տվյալ աշխատողից այլևս չի գանձվում անդամավճար:

5. Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է կազմակերպության

նախագահի ներկայացմամբ՝ արհկոմիտեի որոշմամբ՝ կանոնադրության պահանջները խախտելու կամ կազմակերպության պատիվն ու հեղինակությունը արատավորելու դեպքում:

6. Կազմակերպության անդամների ՀՊՄՀ գործատուի մոտ այլ աշխատանքի

փոխադրվելը, աշխատանքի վարձատրության չափը, արտոնությունները, աշխատաժամանակի ռեժիմը փոխվելը, ոչ լրիվ աշխատաժամանակ սահմանվելը կամ վերացվելը, տարակարգերը և պաշտոնների անվանումները փոխվելը հիմք չեն կազմակերպությանն անդամությունը դադարեցնելու կամ անդամակցության նոր դիմում գրելու համար: